



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 3

— ԶԵՆԱԲԱՐԹ —

14 ՅՈՒՆՈՒԱՐ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵՆՍԿԱՅԻՆ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

ՄԵՆՍԿԱՅԻՆ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղք Պեյ խանին սահ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեկուն ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջերմապէս կը լանճնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԻՐ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած լանճնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգէին արժանացած են:

Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرتبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշսկի թիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լաւագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախօին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կայաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԱԻԻՏԱՐ | 2արշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզզուլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



ԿԵԱՆՔԻ ՃԻԻՎ

Դրամագումի եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ՃԻԻՎ

Դրամագումի եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և
կարասիք:

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ:

ՖէնիքՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Ընդհանուր

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 3

ՇԱԲԱԹ

14 ՅՈՒՆԻԱՐ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լրացուցիչ դասընթացը եւ նախախրոսխանքը (հմբագրական). — Տ. : Պարզ խօսքեր (Ս. Պատրիարքին դիտողությունը). — ՄԻՄԷՈՆ ԾԵՐՈՒՆԻ : Թե ի՞նչպէս գրեցի առաջին յոդուածս. — ՎԱՂԻՆԱԿ : Պարոնեան իրաւագէտ (Ինչե՞ր կ'ըսէ Պարոնեան). Մեղի ծիրերը. — ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ : Ֆռանսացի գրագէտը եւ Հայ գրագէտը. — ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ : Կանանց բարբառներ (Ժամե՞ն ներս). — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : Վե՛հ մը. — Գ. Փ. : Պարոնեանի կարծիքները : Լուրերու սրցակ : Նուէրս (Ժողովրդական քանանստեղծություն). — ԵՐՄՈԳ : Եաթրուան լուրեր :

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ ԵՒ ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Պարզ խօսքով, կրթական հարցը միշտ պէտք եղած կերպով ըմբռնած չենք :

Նախակրթութեան համար վերջին տարիները բաւական լուրջ ջանքեր եղան մեր մէջ, չենք կրնար ուրանալ այս իրողութիւնը : Եւ երբ կ'աշխատինք մէկ կողմէ աւելի լուրջ և աւելի առողջ հիմերու վրայ դնել նախակրթութիւնը, դատապարտելի փութկոտութիւն մը ցոյց կուտանք միւս կողմէ : Տեսէք թէ ի՞նչպէս :

Նախակրթութեան պահանջները հետզհետէ մատնանիշ կ'ընենք, և դարձմանը փնտռելու համար մեր ձեռքէն եկած աշխատութիւնը չենք զլանար : Կրթական ծրագիրը աչքէ կ'անցընենք տեսնելու համար թէ կարեւոր փոփոխութիւններ կրնա՞նք արդեօք մտցնել անոր մէջ, թաղային սնտուկներէն վարժարանին յատկացուած գումարները աւելցնելու կը ջանանք, թաղային արտասովոր հասոյթներէն բաժին կը հանենք վարժարանին եւմտացոյցը ճոխացնելու համար աստիճանաբար : Ասոնք աղէկ, և նոյն իսկ աւելին ալ պէտք է խորհիլ ապահովելու համար դրամը, որ կրթական գործին ալ ջիղն է :

Բայց ի՞նչ ըսենք սա մեր անհանդարտ փութկոտութեան, որով նախակրթութեան ի նպաստ ամէնէն լուրջ ջանքերուն մէջ իսկ, երբ տակաւին մեր բաղձացած կրթական նպատակին չենք հասած, կը նկրտինք բարակնալ, դասարանները նեղել, նեղցնել, տեղ բանալու համար յիսխին, որ հետզհետէ նորասիրութեան եռանդէն մղուած մեր կրթական մարմիններուն մոլութիւնը կը դառնայ:

Նորասիրութիւնը ա՛յնքան ծայրայեղ է, պերճանքին տենչը այնքան կանխահասօրէն զարգացած, որ նոյն իսկ կրթական ծրագրին տրամադրած սահմանէն կ'անցնինք անդին, և Լրացուցիչ դասընթացք կը հաստատենք աղջիկներու ա՛յնքան թուով, որ կրթական ծրագրին հակառակ է: Նոյն օրէնքը կը տրամադրէ որ առնուազն տասը աշակերտուհիներէ բաղկանայ նոյն դասարանը, բնականաբար ուշիմ, և նախակրթութեան տարերքը մարսող աշակերտուհիներէ: Կամաց կամաց ասոր բնաւ կարեւորութիւն չենք տար: Եւ որովհետեւ կանխակալ կարծիք կամ նախապաշարում եղած է այլ եւս մեր մէջ Լրացուցիչ պահելը, 5-6 աղջիկներով իսկ կը կազմենք նոյն դասարանը, և նախակրթութեան պէտքերուն յատկացուած դրամին մէկ կարեւոր մասը կը վառնենք նոյն դասարանին համար: Անհրաժեշտը կը զրկենք, նուազ կարեւորին համար:

Մէկ կողմէ նախակրթութիւնը աւելի գործնական ընելու նպատակաւ կըրթական ծրագիրը կը բարեփոխենք, ինչ որ առաւելական ծախք մը կ'ենթադրէ անշուշտ, միւս կողմէն ալ բուն նախակրթութեան նպատակէն դուրս ծախքերու դուռ կը բանանք: Մէկ կողմէն նախակրթութիւնը աւելի արժեքներու համար ջանքեր կ'ընենք, միւս կողմէն մեր աշխատութեան կարեւոր բաժինը, և մեր ծախքերուն լեցունկէկ մասը ուրիշ պէտքի մը՝ որ այնքան կարեւոր չէ՝ կրթական մեր ներկայ կացութեան մէջ՝ գոհացման կը դորձածենք: Պերճանքին, աւելորդին սէրն է այս, որ մեր ընտանեկան շրջանակներու մոլութիւնը եղած է, զոր այսօր տակաւ նո՛յն շրջանակներէն կը փոխադրենք դպրոցական շրջանակին մէջ:

Իրաւ է թէ կրթութեան աւելորդը չըլլար, բայց ամէն գործ պէտք է առեւտրական ճշդութեամբ վարել և ըմբռնել այնպէս, գոնէ դրամական մասին: Նախակրթութեան պէտքերը ըստ բաւականին գոհացնելու համար պէտք եղած դրամը ունի՞նք, կրնա՞նք գտնել զայն: Այս տարրական հաշիւը չէ՞ որ դպրոցին վարիչները պիտի ընեն: Եթէ հաշիւսին ընեն անկողմնակալութեամբ և պերճանքի կապանքներէն զերծ, և տեսնեն թէ կրնան հասնիլ միւսին ալ, ո՞վ կը բռնէ իրենց ձեռքը Լրացուցիչ չպահելու համար:

Օրինակը ամէն սկզբունքէ, ամէն խորհրդածութենէ աւելի պերճախօս է:

Օկիւտարի վարժարանները միացան, բայց ասիկա չէր նշանակեր որ հասոյթները իսկոյն հրաչքով բազմացան, այնպէս որ կարելի ըլլար աւելի մեծ վարժարաններ պահել հոն: Նոյն ոչ-բարեկեցիկ թաղերն էին, նոյն կրթական ոյժերը և նոյն հասոյթները, և գուցէ տնտեսապէս աւելի աննպաստ ժամանակ

մը : Կրթական միացումը անպատճառ Լրացուցիչ դասընթացք պահել չէր նը-
շանակեր , կամ Լրացուցիչի պայմանը չէր : Բայց ենթադրենք որ փորձ մը
ընել պէտք էր : Լա՛ւ , այդ փորձերը կարելի էր ընել առ առաւելն մէկ ամ-
սուան մէջ , և փորձը ցոյց տուաւ որ 5-6 աղջիկէ աւելի յաճախող չկայ Սկիւ-
տարի նման բազմամարդ կեդրոնի մը մէջ : Արդ , կ'արժէ՞ , կը վայլէ՞ որ լոկ
մէկ դաստարանի համար 3500-4000 զրոյ ծախք ընենք 5-6 աղջիկներու հա-
մար , և մասնագէտներուն ամբողջը յատկացնենք 5-6ին , բուն նախակրթու-
թիւնը կազմող բազմաթիւ դասարանները զրկելով մասնագէտներուն հոգա-
ծութենէն : Մեր ըսածին իրաւունք չտուողը թո՛ղ մատը վեր առնէ :

Միացեալ երից վարժարաններէն Ս. Խաչի վարժարանը կը դասախօսեն
միայն մասնագէտները : Իճատիէ և Եէնի-մահալլէ իրենց ներքին իւղերովը
կը տապկուին : Դիտութեանց ուսուցիչը , թուաբան դասատուն , Հայերէնի
մասնագէտը Ս. Խաչ կը մտնեն և անկէց դուրս կ'ելլեն , ժամանակի մեծ մա-
սը զբաղելով Լրացուցիչին հետ : Երբ Սկիւտարի պէս բազմամարդ թաղի մը
մէջ գոնէ 10 աշակերտուհի չենք կրնար գտնել , որով կալմուի Լրացուցիչը ,
և երբ թաղ. Խորհուրդը Պիւտճէի անձկութեան առջեւ կը գտնուի , կ'արժէ՞
— կը կրկնենք — որ Լրացուցիչ պահենք ա՛յն միակ պատճառաւ որ պահել
կ'ուզենք : Թաղ. Խորհուրդին հաշուադէտ և նրբաքնին անդամները իրենց
սեփական առտնին տնտեսութեան մէջ այսպէ՞ս պիտի վարուին : Չենք կար-
ծեր : Այսպիսի հաշիւներով կրթական դրութիւն մը կը փաստէ ուղղակի նա-
խակրթութեան , և կ'ապացուցանէ թէ ծայրայեղ եռանդ մը կը դնենք մեր
պերճանքի ըմբռնումները մինչև իսկ կրթութեան մէջ տանելու : Վարժարան-
ներուն միացումը յոյս կուտար մեզի ամիոփ ու կանոնաւոր վիճակի մը վե-
րածելու երեք թաղերուն նախակրթութիւնը , և երեքն ալ հաւասարապէս
օժտելու մասնագէտներուն աշակցութեամբ : Իճատիէի մէջ դժգոհ մաս մը
կար վարժարանը մասնագէտներու աշակցութենէն զրկուած տեսնելով , նոյնը
Եէնի-մահալլէի համար կրնայինք ըսել : Միացումը ասոր առաջըր առնելու
էր : Բայց այնպէս չեղաւ , որովհետև մասնագէտները զբաղեցնելու էինք
թերի դասարանով մը , ուր գիտէինք թէ աւելի պիտի ուզէին ժամավաճառ
ըլլալ կարգ մը պաշտպանուած մասնագէտներ , որոնց խաբըր նայելու էինք :

Եթէ վարժարան կառավարելու մեր դրութիւնը այսպէս է , գոնէ Ուսումն.
Խորհուրդը կը պարտէր հարցնել փնտռել թէ կրթական ծրագրին համաձայն
է Լրացուցիչին կազմութիւնը , գոնէ կա՞ն 10 աշակերտուհիներ , և անոնց նա-
խակրթութեան պաշարը համապատասխա՞ն է Լրացուցիչի մը գոյութեան :

Եթէ Ուսումն. Խորհուրդն ալ իր սա՛ կամ նա հաշիւները ունենայ այս
հարցումը և այս քննութիւնը չընելու , ապահովաբար նախակրթութիւնն է որ
պիտի փաստուի : Քանի որ հաշիւով գործելու դրութենէն չենք կրնար խուսա-
փիլ , քանի որ կանխակալ կարծիքով ու նախապաշարումով կը վարենք մեր
կրթական յարկերու նուիրական գործը , ամէն պատճառաբանութիւն աւելորդ
է , և տրամաբանութիւն ընելը բոլորովին աւելորդ յոգնութիւն մը կը դառ-

նայ, եթէ արհեստով հրապարակագրութիւն մշակելը մեր մասնաւոր գործը չըլլայ: Կրթական հանդէսներու առթիւ անոյշ անոյշ բառեր, վճիռներ կը ծորին մեր շրթներէն, բայց անողոք քննութենէն, որ առանց հանդէսի կ'ըլլայ և պէտք է այնպէս ըլլայ, կը խուսափինք, փոքրիկ փառասիրութիւններ գոհացնելու համար, բայց ի վնաս մեր նախասիրել ձեւացուցած նախակըրթութեան:

Տ.



ՊԱՐԶ ԽՕՍՔԵՐ

Ս. ՊԱՏՐԻԱՐԷԻՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆԸ

Ս. Ծնունդի պաշտօնական շնորհաւորութիւնները ընդունելով, Ս. Պատրիարքը, ըստ սովորութեան, ուշագրաւ բանախօսութիւն մը ըրաւ եւ յայտարարեց որ մեր ուսումնական զարգացման համար եղած ջանքերը տակաւին գոհացուցիչ արդիւնք մը տուած չեն: Ն. Սրբազնութեան այս կարեւոր յայտարարութիւնը կը շեշտէ ու կը հաստատէ ինչ որ ասկից առաջ լրագիրներուն մէջ պարբերաբար գրուած է մեր կըրթական անգոհացուցիչ վիճակին նկատմամբ:

Ուսումնական Խորհուրդը ինը երկա՛ր տարիներէ ի վեր մեր թաղային վարժարաններու ղեկը ստանձնելէ եւ կրթական անհամար ծրագիրներ, կանոնադիրներ ու շրջաբերականներ պատրաստելէ ետքը, տակաւին չէ կրցած գոհացուցիչ վիճակ մը առաջ բերել: Շատ տխուր չէ՞ այս:

Թո՛ղ ուրեմն փոխանակ շրջանաւարտից հանդէսներու միջոցին Յայսմաւուրքի չափ երկար ճառեր խօսելու, նկատի առնեն Ս. Պատրիարք Հօր այս տեսակ մը փափկանըկատ դիտողութիւնը եւ ամէնէն առաջ մը ղու՛մ տան արհեստային կրթութեան, որու մասին դեռ քայլ մը իսկ առնուած չէ դժբախտաբար: Ս. Պատրիարքը, որ ուսումնասիրող ու հետաքննող միտք մը ունի եւ ա՛յնքան սիրտ կը հատցնէ մեր մանուկներուն բարւոք եւ նպատակայարմար դաստիարակութիւն մը տրուելու մասին, քանիցս շեշտեց արհեստային կրթութեան պէտքը, բայց միր Ուսումնական Խորհուրդը այնպիսի ոգիով մը սկսած է բարեփոխել կրթական ծրագիրը որ ո՛չ իսկ ընդունած ըլլալ կը թուի ձեռական աշխատութեան պէտքը մեր վարժարաններուն համար:

Յուսա՞նք արդեօք որ Ս. Պատրիարքին յայտարարութիւնը գրգիռ մը պիտի ըլլայ Ուսումնական Խորհրդոյ անդամներուն՝ աւելի հոգածու գտնուելու համար մեր կրթական վիճակին:

ՍԻՄԷՈՆ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Տ.

ՊԱՐԶ ԽՕՍՔԵՐ ՍԻՄԷՈՆ.

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Գ. Փ.

ԷԼԻԶ ՀԱՃԵԱՆ

ԵԻԱՅԼՆ

ԵԻԱՅԼՆ.

Ինչպէս նախորդ քիւով ծանուցած էինք, մեր նոր աշխատակիցը՝ Վաղինակ, որ առիճն գրականութեան մեջ ծանօթ է իր սահուն գրչով եւ սրամիտ դիտողութիւններովը, այս շաբաթունէ կ'սկսի իր յօդուածներուն շարքը, զոր յուսանք թէ մեծ հաճոյքով պիտի կարդան «Հանրագիտակ» ի ընթերցողները:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՐԵՅԻ

ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾՍ

Ասկէ երկու տարի առաջ տող մը բան գրած չէի մեր թերթերուն մէջ, որոնց քննադատութիւնները մեծ ախորժով կը կարգայի սակայն, միայն թէ երբեմն աշառութիւններու հանդիպելով կը փափաքէի անաշառ քննադատութեան նմոյշ մը ընծայել, եւ ահա ասոր համար ընտրեցի Հանրագիտակը:

Ուստի նախ եւ առաջ ուզեցի մօտէն ուսումնասիրել մեր վարչական եկեղեցական եւ կրթական դէմքերը, որոնց մէջ կեղծ համբաւ չահողներ չատ կան, ասոնք կարգ մը խմբագիրներու հետ բարեկամութիւն մը չակելով յաջողած են իրենց համբաւը անաղարտ պահել: Իմ ոկզբունքս պիտի ըլլայ այսպիսի կեղծ համբաւի տիրացած մարդոց իսկական արժանիքը մէջտեղ հանել, որպէս զի ընթերցող հասարակութիւնը կարենայ որոշ գաղափար մը ունենալ իր մտաւոր եւ հոգեւոր առաջնորդներուն նկատմամբ:

Այս ընթացքով թերեւս մեր թերթերուն prestigeը քիչ մը նուազի, որովհետեւ մեր քննադատութիւններուն մէջ պարսաւանքի մեծագոյն բաժինը պիտի ունենան այնպիսի անձեր, որոնք միշտ զրուատիք ընդունելու վարժուած են օրուան թերթերուն մէջ: Չենք գիտեր թէ մեր այս անաշառ ուղղութիւնը ի՞նչ ընդունելութիւն պիտի գտնէ մեր հասարակութեան քով, բայց մենք ու եւ է ակնկալութիւն մը չունենալով պիտի շարունակենք մեր ուղղութիւնը Հանրագիտակի մէջ, որ մեր հանրային, եկեղեցական եւ կրթական թերութիւնները ձաղկելու նպատակը ընդգրկած է:

* * *

Այս համառօտ յառաջաբանէն ետքը սկսինք մեր քրոնիկագրի պաշտօնը:

Ամէնէն առաջ դիտողութիւն մը ունիմք քրոնիկագրի մը տարեկան տեսութեան դէմ:

Այդ քրոնիկագիրը որ փորձեց ստուեր ածել մեր սիրեցեալ դաստիարակին երկարամեայ տընութիւններուն վրայ, եւ իր արժանաւոր պատասխանը ստացաւ տրդէն, տարօրինակ փութկոտութիւնով մը հրաւէր կարդաց Սամաթիոյ եւ մերձակայ թաղերուն, որ հետեւին Սկիւտարի կրթական եւ եկեղեցական նոր կազմակերպութեան, կերեւի թէ յիշեալ քրոնիկագիրը որ իրաւամբ առաջնակարգ խմբագրի համբաւ ունի, այս տողերը գրած ատեն բնաւ հետաքրքրութիւն ունեցած չէ մօտէն քննելու Սկիւտարի երից թաղից դպրոցական եւ մատակարարական կազմակերպութիւնը, որ դժբաղդաբար տակաւին գահացուցիչ արդիւնք մը ընծայած չէ: Կ'ընդունինք որ Սկիւտարի երից թաղերու ծանօթ կազմակերպութիւնը փորձի համար եղած էր, ինչպէս արդէն Ս. Պատրիարքն ալ հաստատած է տարուան մը շրջան սահմանելով առժամեայ թաղ. Խորհուրդին: Ուր տեսնուած է որ քանի մը ամսուան փորձէն անմիջապէս հետեւութիւններ հանուին եւ ուրիշ թաղերու օրինակ ընծայուին:

Եթէ յարգելի քրոնիկագիրը Ապուլէիցի ըլլար չպիտի զարմանայի, որովհետեւ Ապուլէիցիները սովորութիւն ունին մէկ կողմէն գարի տալ իրենց ոչխարին, եւ միւս կողմէ անոր դմակը շօշափել, գարիին արդիւնքը անմիջապէս վայելելու փութկոտութեամբ: Այս գիւղացիներէն տարբերութիւն մը ունեցած պիտի չըլլայ յիշեալ քրոնիկագիրը, որ 4-5 ամսուան կարճ միջոցի մը մէջ արդիւնք կը սպասէ դպրոցական միացումէն, որուն վերջնական ձեւ մը տրուած չէ տակաւին: Հետեւաբար մեզի համար կանխահաւ կը նկատուի ուրիշ տեղերու իբրեւ օրինակ ցոյց տալ Սկիւտարի համար եղած վերջին կրթական կարգադրութիւնը:

* *

Գայլըգճեան վարդապետին Պոլիս գալը կարծուածին չափ օգտակար չեղաւ առայժմ երուսաղէմի հաշիւներու քննութեան տե-

սակէտով: Գրեթէ ամիս մըն է որ եւմտից արդի տեսուչը Պոլիս կը գտնուի եւ սակայն Այվազեան Արքահամ էֆէնտիի հետ հոս ու հոն այցելութիւններ տալէ զատ գործ մը տեսած չունի:

Ծննդեան պաշտօնական շնորհաւորութեանց առթիւ ուր ներկայ գտնուելու պատիւն ունէի, Ս. Պատրիարքը յայտարարեց թէ՝ հաշիւներու քննութիւնը ի մօտոյ՝ պիտի աւարտի, կը մաղթենք որ այդպէս ըլլայ, թէեւ իրաց վիճակը մօտ օրէն այս գործին աւարաման յոյսը չի ներշնչեր մեզ:

Լեւոն Փափագեան
(ՎԱՂԻՆԱԿ)

ՊԱՐՈՆԵԱՆ ԻՐԱԴԱԳԵՏ

ԻՆՁԵՐ Կ'ԸՍԷ ՊԱՐՈՆԵԱՆ

Այն մարդերը՝ որ իրենց հարստութիւնը զուարճութիւններու մէջ կը թաղեն, մէկ տարիէն երկու տարի կըստիպուին խմբադրութեամբ զբաղելու:

Այն կիները որ իրենց ամուսնոյն հետ ամէն իրիկուն կռիւ ընելու սովորութիւն ունին, մշտնջենական ֆոֆուքով կը պատժուին:

Այն կիները՝ որ կոկիկ երեւալու փափաքով հաղուստի ու կապուստի անձնատուր կըլլան, տարի մը կէս կանգուն մեծութեամբ կօշիկ հագնելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ իրենց ծնողքը չեն յարգեր, եւ իբրեւ սպասաւորի մը հետ կը վարուին անոնց հետ, չոգենաւերու մէջ մեծիֆիսի աւրել տալու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ պատ ի պատ խօսքերով ուրիշները կը խաղցնեն եւ իրենց խօստումը չեն կատարեր, երբ ստիպողական գործ մ'ունենան, այդ գործը մշտնջենական նկատողութեան առնուելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ գրական ասպարէզին վրայ բանագողութեամբ կ'ապրին, անհամ ձանձրացուցիչ եւ երկար յօդուածներ ընդօրինակելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ դասատուութիւն ընեսու չափ յառաջ կը տանին իրենց յանդգնու-

թիւնը, իրենց դէմը եղող անձին ազնիւ զգացումներ յայտնելու կը դատապարտուին:

Այն կիները՝ որ իրենց տանը կառավարութիւնը սպասուհիներու կը յանձնեն, եւ իրենք ասդին անդին կը պտըտին, իրենց տանը դիմացը գեղեցիկ դրացուհի մը ունենալու կը դատապարտուին:

Այն կիները՝ որ իրենց սպիտակ մագերը սեւի կը ներկեն, ճերմակին սեւ ըսելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ իրենց զաւակներու կըրթութեան մասին անտարբեր եւ անհոգ կը գտնուին, ձիաւորի մը ետեւէն վազելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ վիճաբանութեան մէջ իրարու խօսք հասկնալ չեն ուզեր, Սկոտոսին ինչ սկզբունքի ծառայելն գուշակելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ իրենց պարտքը չեն վճարեր, կը դատապարտուին անանկ տեղ տուն մը նստելու, որ երթալու համար անպատճառ իրենց պարտատէրին առջեւէն անցնելու ստիպուին:

Այն մարդերը՝ որ ուսմունքէ գիտութենէ բոլորովին զուրկ են, շատ սոնգամ ուրիշներու առաջնորդ ըլլալու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ գաւաթ մը ջուրի կարօտութիւն ունին, ուրիշներու կենացը համար բաժակ առաջարկելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ հազար տալու կարողութիւն ունին եւ հինգ կուտան կը պատժուին իրենց տուած նուէրները լրագիրներու մէջ հրատարակուելով:

Այն մարդերը՝ որ առանց աշխատութեան հարստանալ կը փափաքեն, դրամով աղջիկ առնելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ բարեգործ չեն, տեղատարափ անձրեւի ատեն իրենց հովանոցին տակ ընկեր մը գտնելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ ուրիշները կը խաբեն, իրենց պահանջքը ուզելու համար պարտականին երթալու եւ զայն իրեն խանութին մէջ չ'գտնելու կը դատապարտուին:

Այն կիները՝ որ ամէն երիտասարդի վերայ մէյմէկ յանցանք գտնելով չեն ուզեր

անոնց հետ կարգուիլ, գիշերները տունը ուշ եկող ամուսինով մը կը պատժուին:

Այն մարդերը՝ որ աղջիկ մը գտնելու համար թաղէ թաղ կը շրջին, գիշեր ցորեկ վէպ կարդացող կնկան մը կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ իրենց բոլոր ժամերը գինովութեան կը զոհեն եւ բնաւ ջուր չեն խմեր, գիշեր մը իրենց ծարաւն անցնելու համար խմելու ջուր չի գտնելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ երկու ժամուան ճամբան քառորդի մը մէջ առնել կուզեն, նեղ կօշիկներով կը պատժուին:

Այն մարդերը՝ որ խօսք հասկնալու սովորութիւն չ'ունին, անընթեռնի տառերով գրուած յօդուած մը շարելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ երկար ատենաբանութիւններով ունկնդիրները քրտինքի մէջ կը թաթախեն, շատախօս կնիկ մը առնելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ ուրիշները մօիկ ընել չեն ուզեր, անախորժ ձայնով գիշեր ցորեկ երգող դրացի մը ունենալու կը դատապարտուին:

Այն կիները՝ որ բնաւ չ'ծերանալ կը փափաքին, 18 տարեկան հասակին մէջ իրենց առջեւի ակռաներէն հատ մը կորսնցնելու կը դատապարտուին:

Այն մարդերը՝ որ իրենք զիրենք գովելով կը բազմանան, ունկնդիր չ'գտնելու պատժոյն կ'ենթարկուին:

Կօշկակար Խոսրով 15 զըշ առնելիք ունի ուսուցիչ Գրիգորէն:

— Սա պարտքդ չտա՞ս նայի՛մ, կ'ըսէ վեցերորդ անգամ ըլլալով:

— Դուն սըկէ քառորդ մը տուր, որպէս զի առնելիքդ կ'ըրեմի ըլլայ:

— Կ'ըրեմի՞ դրամի պէս, անանկ չէ՞, կը հարցնէ Խոսրով ուրախացած:

— Չէ՛, զէրօյի կը պատասխանէ Գրիգոր գլխիկօր:

Մ Ե Ղ Ք Ի Մ Ի Ր Ե Ր Ը

Պատմութիւնը քու մեղքերուդ
Դուն չես կրցած պահել բնաւ,
Անոնց ծիրը, անցիկն անգուր
Շրջանակ մը բերաւ դրաւ:

Եղնիկի շայն աչքերուդ շուրջ,
Եւ կապտամած այդ երիզին
Բջիջներէն կարծես անուրջ,
Սէր ու սարսափ դեռ կը ծորին:

Վառ քիթերդ հարսի շքեղ
Դեմք մ'են կարծես, որ սգաւոր
Շրջանակին մէջ փառագեղ
Կը չարչարուի յոյզերով նոր:

Աչքերուդ դեմ այդ անպարիշ,
Վայրկեաններդ յուզումներու,
Եղի կիրքերու կը ձուլուին միշտ,
Հին մեղքերն ալ փախչին հեռու:

Ստուերներու պէս հալածուած:
Կեանք գաղտնիք չունի երբեք,
Դիցունի մըն եւ կեղակարծ,
Տարփանքներու սփռն ու հեղ:

Գարշանք չունիմ բնաւ սակայն,
Հանդեպ աղտոս, ցոփ արձանիդ,
Անշուք, անեստ կը ձգե զայն
Ակնարկիդ ուժը միամիտ:

Սեւ ծիրերուն շրթային մեղ
Աչքերդ մութ գիղջը չունին,
Անկեղծ, պայծառ հուր մը անշեղ
Կը խնկուի հոն սարսաղին:

Ասոր համար է որ արքշիռ
Իդմ մը կզգամ, մայքի կնկան
Գայքումներուդ մէջ ուշացիր
Սիրելի քեզի տղու նման:

Այդ ծիրերը քառապանակ
Հուսապսակ եւ չքմեղող,
Որոշ շուքին քակ մեղի հոգին,
Բիւրեղանայ ջինջ իրեւ ցօղ:

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՖՈԱՆՍԱԳԻ ԳՐԱԳԵՏՐ ԵՒ ՀԱՅ ԳՐԱԳԵՏՐ

(Զուգակշիռ)

Հայուհին՝ Անգլուհին, Գերմանուհին, Հելլենուհին հետ բաղձատուրեան դրուեցաւ:

Ուստի թող ներուի մեզ ալ, Փռանսացի գրագէտը՝ հայ գրագէտին հետ բաղձատուրեան դնել:

Բայց կանխաւ կ'իմացնենք որ հայ գրագէտին նժարին մէջ բաւական քար պիտի դնենք կշիռը չկոտրելու համար:

Սկսինք ուրեմն:

Փռանսացի գրագէտը, զիրք գրելով տուն կը շինէ, մինչ հայ գրագէտը տուն կը ծախէ (եթէ ունի):

Փռանսացի գրագէտը 35-40ին կը սկսի գրել, մինչ հայ գրագէտը 12ին արդէն համակրելի աշխատակից մըն է:

Փռանսացի գրագէտը ոչխարի, կովու, հորթի միս կ'ուտէ երբ անօթենայ, մինչ հայ գրագէտը իր նմաններուն միսը:

Աղջիկներ, Փռանսացի գրագէտին շուրջը կը յաճին սիրով, մինչ հայ գրագէտին հետու կը փախչին, որովհետեւ կը վախնան որ կ'ելլէ զիրենք յողուածի մը մէջ կը քաջքէ:

Փռանսացի գրագէտը խմբագրատուն կ'երթայ ստացագիրը ստորագրելու համար, մինչ հայ գրագէտը յողուածը հոն ... զըրելու համար: (Ասով գէթ թուղթը եւ մեղանը վրայ չ'երթար):

Փռանսացի հեղինակի մը մէկ տող կատակը 3-4 ֆրանք կ'արժէ, մինչ հայ գրագէտինը ... վեց սիւնակ:

Փռանսացի գրագէտին տունը կը բերեն յողուածի մը արժէքը, մինչ հայ գրագէտը ինք անձամբ խմբագրատուն կ'երթայ շնորհակալութիւն յայտնելու իր յողուածին տպուելուն համար:

Փռանսացի գրագէտը բան մը գրելով 100,000 աւոր ֆրանքներ կը շահի, մինչ հայ գրագէտը 100,000է աւելի ձրի շնորհակալութիւն յաջորդ օրը:

Փռանսացի գրագէտին իտէպը փարա շահիլ է, մինչ հայ գրագէտինը լուսանկար եւ յողուած ունենալ Նշան Պապիկեան տարեցոյցին մէջ:

Փռանսացի գրագէտը բան մը գրելու համար սիկառ կը ծխէ, մինչ հայ գրագէտը զլուխը կը քերէ, ճակատը կը չիտէ, կը խըկայ, կը շնչէ:

Փռանսացի գրագէտը համակիրներ ունի իր շուրջը, մինչ հայ գրագէտը գետնէն բուսած քննադատներ:

Փռանսացի գրագէտը հեղինակի իրաւունք ունի, մինչ հայ գրագէտը չժախուած օրինակները տուն տանելու:

Փռանսացի գրագէտը մը երբ մեռնի վրան դամբանական կը խօսին, մինչ հայ գրագէտին վրայ ոչ, որովհետեւ դամբան չունի:

Փռանսացի գրագէտը մը թերթի մը մէջ տարին մէկ կամ երկու անգամ կ'երեւի, մինչ հայ գրագէտը մը մի եւ նոյն թիւին մէջ քանի մը անգամ:

Փռանսացի գրագէտը տարւոյն իւրաքանչիւր եղանակին յարմար գօսիւմներ ունի, մինչ հայ գրագէտը ձմրան բալթօ մը անգամ չունի:

Փռանսացի գրագէտը դրամ է, մինչ հայ գրագէտը ասոր միայն քեռը:

Փռանսացի գրագէտը ծաղիկը լամբարին վրայ կը կրէ, մինչ հայ գրագէտը կամ երեւոյր եւ կամ գրպանը:

Փռանսացի գրագէտին գրածը քանքար է, մինչ հայ գրագէտինը անքար: (Ճիշդ իմինիս պէս):

Փռանսացի գրագէտին գուլպաները սեւ ֆիլիսիֆոս են, մինչ հայ գրագէտինը ճերմակ բուրդ:

Փռանսացի գրագէտը արձակ համարձակ կը խօսի, մինչ հայ գրագէտը քննելով եւ ոտքերով:

Փռանսացի գրագէտը օրը մէկ օձիք կը փոխէ, մինչ հայ գրագէտը օրը երկու խմբագրատուն:

Փռանսացի գրագէտը կիրակի օրերը պըտոյաի կ'ելլէ, մինչ հայ գրագէտը քարոզ կը սղագրէ:

Փռանսացի գրագէտը բիթը թաշկինակով կը խնչէ շնորհալիօրէն, մինչ հայ գրագէտը բթացուցամատովը ահռելիօրէն:

Բերա

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԲԸՍԸԲԸՍԸՆ

ԾԱՄԵՆ ՆԵՐՍ

Զուլա կարդացող օրիորդները, ինչպես նաեւ պիլ-պիթ հագնող միւսիւներն անգամ կ'սթափին ու ջերմեռանդութեան չափիկ մը կ'անցնեն կռնակին գոգցես իթման երեկոյին: Հաւատքը ոյժ կուտայ իրենց եւ եկեղեցարոյր խունկը առ ինքն կը քաշէ զիրենք, այնպէս որ, ա'յն եկեղեցին, ուր ուրիշ օրերու թափուր կ'ըլլար՝ իթման իրիկունը կը հեծէ երկսեռ բազմութեամբ մը... ազօթասէրներու:

Կարեւոր թաղի մը եկեղեցին գտնուեցայ Հինգշաբթի իրիկուն:

Եկեղեցական երգեցողութիւնները իրենց է'ն անուշ արձագանքը լսելի կ'ընէին ամէն ուրեք, մինչ ես «ես մեղաւորս» ի ձեռով անկիւն մը կծկուած ի զուր կը ջննայի աւանջ տալ շարականներուն, որոնք կը խափանուէին ետիս անցած կանացի բըսըբըսըներէն:

— Քա Նունի'կ, սա կայնողը ան չէ՞ ...

— Կայնէ նայիմ, որի՞ համար ես ...

— Իշոէ', կընիկ ապլա խազէթաճի մը կայ նէ, սա ո'ւր է պիր տիւլ միսերնիս սախըզ ըրեր կը ծամէ նէ ...

— Նայի'մ ... հա' ան է ամա, չիմացա'ր ...

— Զէ', ի'նչ կայ քի ...

— Խազէթան ձգեր է ...

— Վո'ւյ մըսեր ...

— Հապա՞ ... լսածիս նայելով, կընկանը մէկը այազմայի ճուր է սըրսըխներ վրան, անոր վրայ շարաթ մը չէ քչեր խազէթան ձգեր է ...

— Օ'խ ... կիտի լակոտ, մեղա'յ, աս ամէն իժիր մեզ մասխառա կ'ընէր կոր եռմուռձախը ... սանկ մօտիկը ըլլայի տէէքէ քէօքիւին մէյ մը իչնայի ...

Ու խնդուքս չեմ կրնար զսպել, այդ չորցած կռնցած տիկիներուն խօսակցութեան համար: Ու կը մտածեմ:

Ամէն անոնք, որոնք կարդացին անշուշտ

մեր առաջին թիւին մէջ խմբագրական յայտարարութիւնը, գիտեն թէ վզիս պարտք դրած են աշխատակցիլ Հանրագիտակին, իմ սովորական յօդուածներովս, որոնք բընական է՝ բժշկական կամ բանաստեղծական չպիտի ըլլան, այլ կնահոտ եւ չլթիկաբոյր (.), որպէս զի հաստատուի սա խօսքը՝ «գըրուած է թէ՛ Վահան Փափազեան կիներուն վրայ պիտի գրէ ...»:

Եւ որ ինչ գրուած է՝ գրուած է:

X

Հիմա լեզի լեցուն է տաճարը, հոն եկած խոնուած են, բարին ու չարը, ոմանք ինտէլիքէնտ, ոմանք ուշարը, ի'նչ օգուտ, ժամ է, չիկայ ալ ճարը: Կիներն որ ըսես, հոս հոն սկսած բամբասանք-ճառը, որը Ֆիստանի ձեւ կ'որոշէ, որն ալ գովէ օճառը, անդին ջերմեռանդ նաչարը, մտքէն մոլայայ այսօր անճառը:

Երբ մէկուն համար «անխելք է» ըսել ուզուի, վերնատունը մարդ չիկայ կ'ըսեն, Ծնունդի իթման երեկոյին հակառակ վերնատան մէջ կիները իրար կզելնուն, պիտի համարձակիմ ըսել թէ՛ վերնատունը մարդ չիկար, քանի որ կիներն էին այդ բազմութիւնը կազմողը, եւ ինծի համար կինը ... հայտե չըսեմ ...:

Հիմա մտիկ ըրէք խօսակցութիւնը, որ կանցնի Աստուծոյ Տաճարին մէջ, զորս հոս վարը կարդալով՝ դուք ալ ինծի պէս պիտի կրկնէք սա արդար խօսքը «վերնատունը մարդ չիկայ ...»:

— Քա որ սահաթ է քովդ պիտի գա՞մ ամա՞ ... պիր միւնքիւն չեմ կրնար կոր ձղեր ... քա մարիկ գիտես քի իւմիւ տիւնեան կէօջ են ըրեր ... վա'յ մեղքիս ...

— Էյ տնայէն, ասանկ օր է տէյի, պորտերնին դուրս են ձգեր, հապա աս տառի հափաներուն զանցայէն, էլ ալէմը ձըմ-

րան չինած ֆիստանը խցսմէթ չեղաւ քի կռնակը անցուներ տէ խօթութեան պէս մահալէ մահալէ պտըտէր ...

— Սանքի կա՛յ եա՛ ... ճըպըպըխ ... ամա՛ն ... աս կընիկ միլէթին, սանքի է-րիկմարդիկ եախա կը թոթուեն նէ հախ ու-նին, սա բօսթալներուն սիւսը նայէ ...

— Քա ան է ըսերա եա, սըխըտար հալ-խուն մէջը, ծունկ մը աղօթք ընող տեսար... երկնաւորին համար չիտակը ըսէ ...

— Քա գիտեմ, գիտեմ քուրուկ սիրտ մի հատցուներ, աչքով ճիւղիթ կը խաղան կոր, որ մէկուն չարխան, որին բէշը, որ մէկին սալթան, բիւթիւն խըզ խըզի վրայ, իրարու աշկ կը կոխեն կոր ...

— Էյ մեղայ, լուսերուն մէջը պաճիկ ընէ կիլաւորըս, նոր պան մը կռնակս ան-ցուներ նէ, կուզէր քի իր դէմը վայելցու-նէի, քեզի սըխըտարը ըսեմ քի, մինչօք կէ-ճէլիկս քօքօթալը ըրէ կըսէր, հէմ ալ կու-զէր քի, պառկած վախիթս, մաղերս ըռէնկ-լի քօռտէլայով վեր առնէի, ճակատս ալ կիւլպաղին անպակաս պիտի ըլլար, ամա իր դէմը, չէքի անոր ասոր մէկէ հրամցու-նէր ...

— Ը՛նհ ... նէ համը նայող կայ, նէ հոտը ..., քա անչէ ամա Կիւլիկը աղա-տե՛ր է ...

— Հապա, մանչ մը պերաւ ...

— Էյ չօք չէ՛յ ... հիշ չիմացայ ... ինտոր ալ աւրուեր է ...

— Էյ տահա չարուի՞ սանքի, թամամ օխտը եղաւ ... կատուի պէս ամէն տարի կը ձգնէ կոր ...

— Կռողս տանին, կընիկ չեն եա ֆապ-ուիքա ...

— Քա իմացա՞ր ... Սէօրէբէին նշան-տուքը ետ է մնացեր ...

— Քա ի՞նչ կըսէ՛ ... եա ըսին քի հար-կը պիտի կատարի տէյի ...

— Հա՛ ամա՞ ... իմացածիս նայելով փարաճա չարքաշըխութիւն մը ելեր է մէ-ջերին ... Կէօյամ քի տղան առաջ եէթ-միջը վեց օսկի ուզեր է, ետքէն հարուրի է ելեր նէ աղջկանը թառաֆէն պաղեր են ...

— Կէտինին տիպը ասնին քի, տօմաթէ-

սի բէստիլ կը տառցունեն կոր աղջիկները, կը սըխմեն կը սըխմուտկեն կը ձգեն կոր ...

— Ա՛խ ... ես աղջիկ մը ունենալու էի, նայէիր քի ի՛նչ խուռչինի պէս ծանրը կը պոնէի ...

— Էյ Աստուծու սիրուն, սանկ սօլըդ դարձիր տէ նայէ, բօստալները իրար են եկեր տէ ֆըռէնկէվար պաներ մը հէմ կը խօրաթեն հէմ կը գրեն կոր ...

— Աստուծոյ կռնան հէմէն ... մարեր-նին ալ աչքերը թարվեր խաւարեցուցեր տէ կէօյամ քի կ'աղօթէ կոր ...

— Ը՛նհ ... վայ կուլխուն, աղօթք չէ անէ՛ծք է ըրածը ...

— Քա մարիկ էտէպսիլութիւնը պու-տանք են ըրեր մէջը փաթուեր են ալթըխ ... ասոր աստեղը ժամ է մի, ի՛նչ է, հիշ նա-յող սեպող չիկայ ...

— Սուս նայինք, օնիքիւերենք թապա-խի ելան, առջեւնիս կայնին նէ ես գիտեմ զուրցելիքս ...

Եւ իրօք քիչ վերջը Պատ. Թաղ. Խոր-հուրդը եկեղեցւոյ պայծառութեան պնակը չըջագայութեան հանած մօտերնուն կ'անց-նէր :

— Եկեղեցւոյ պայծառութեան պնակը ... անտես մի առնե՛ք ...

— Աֆ կընէք օնիքիւէր աղաներ, ձեզի երկու չիֆթ ճուղապ ունիմ ...

— Վերջին խորհրդարան հրամմեցէք հոն կրնանք լսել, հիմա ատենը չէ ...

— Եկեղեցւոյ պայծառութեան ... ան-տես ... մի ...

— Քա ճանըմ, օնիքիւէր եղեր էք նէ պէտքութիւն է քի աս ժամուն կիրտին չըգ-տըն նայիք ... ասոր աստեղը մուհապէ՛թ պախճասի է ... որ սահաթ է հոս ըլլաք տէ մտիկ ընէք, ալթըխ նէ ֆըռէնկէն մը-նաց նէ հոռմէրէնը, նէ ինկիլիզէն, հա հա հի հի մընէ կերթայ կոր, նէ աղօթքնիս ա-ղօթք եղաւ նէ ալ շարական մը լսեցինք ա-սանկ իրիկունով ...

— Իրաւունք ունիք քուրս, բայց մենք եկեղեցւոյ ներքինին չենք կրնար միջամտել, կրօնական պաշտօնէութեան զիտելիքներն են ատենը ...

— Էկէր պան մը հասկցայ նէ, չիպան-

ներ հանեմ ... քա ճանրմ, դուք չի խառնուիք նէ աս վաթկածները լաֆ կը հասկընան ...

— Եկեղեցւոյ պայծառութեան պնակը ... անտես մի առնէ՛ք ... ըսելով կը հեռանան մօտերնուն. մինչ մեր ճատալող զոյգերը կրկին կսկսին փրփրիլ, առաջինէն ա՛լ աւելի ուժքին եւ բարկացոտ:

×

Ուրիշ անկիւն մը:

— Հիշ ազուր չէք հագուեցուցեր, ընէ ... պաշխա շարխա մը չունէ՞ր քի կլոխը անցունէիք ... սանկ ո՛ւր է չառխի պէս սուռաթը դուրս ֆոլաթմիշ ընող սօյը տէ՛ ... քօքօթալը ...

— Աճէլէի եկանք. աճէլէի, եռմուռնախ ֆիստանձին կէս սահաթ է քի պօլուզան հասուց, հէմէն կոնակը անցունել տուի տէ առջիս ձգեցի ուրի եկայ ...

— Նայէ, կէօքսէրն ալ բէք թախտակի պէս կերեւայ կոր, ֆարազա մէկ երկու մանտիլ թըխէիք առաները ...

— Աման Սուրբուհի տուտու, ան հաւնողը, հաւնի պիտի նէ կը հաւնի, թարէշառի պէս խըթըլամիշ ընելու չե՛մ եա աղջիկը ... չօգ չէ՛յ ...

— Պէ ճանրմ, ձեզի առաջուրնէ ալ ըսի քի, տղան պալըխ էթի կուզէ կոր տէյի, իծծուն օսկի պակաս ըլլայ, աղջիկը տօղուն ըլլայ տէյի, պէթի քսան անգամ թէնպիհ ըրած է ինծի ...

— Էյ ի՞նչ ընենք հիմա, թաւուխ բա. զարը տանելու տէ տիպէն փչել տալու չե՛մ եա ... չօգ չէ՛յ ...

— Հիմա ինծի նայէ, Հոռոբիկը ինծի հեա թող կայ, ես անիկայ կը շտկուտեմ, ալթըխ վախիթ չիկայ, ժամէն ելլալուն, դուրսի բանկալին առջին պիտի կենանք, տղան հոն պիտի գայ տեսնայ, անանկ թէրթիպ եմ ըրեր ...

— Էյ դուն գիտես, Սուրբուհի տուտու ...

— Քալէ քա Հոռոբիկ, հետս եկուր քիչ մը, ըսելով երկուքը մէկ դէպի վերնատան սանգուխներուն կը մօտենան,

— Քա գուզում մոմճի կընիկ, սըտեղը

պուճախ մը կա՛յ աճապ, ճահիլին վրան կը լորը պիտի շտկուտեմ կտորճիկ մը ...

— Նա սա վերտիվէնին պուճախը կըլլայ նէ կըլլայ, չէնէ ո՛ւր կայ, ի՞նչ գիտեամ ...

— Եկուր քա Հոռոբ ... ըսելով կսկսի շտկուտել ... ետէկ բուտոա առե՞ր էք հէտերնիդ ...

— Ունիմ կարծեմ ...

— Հանէ, հանէ տէ խաթ մը տահաքսէ ...

— Մարդ կուգայ կոր ...

— Ձարար չունի ... պանըդ նայէ ... Նա սա մարըմաս ալ կէօքսդ խօթէ ...

— Չըլլար ճանրմ, Տէր պապան վեր կըլլայ կոր ...

— Ես անոր կը հասկցունեմ ...

— Քահանայից ... անտես մի առնէք ... Աստուած օրհնէ ... քա Սուրբուհի տուտու խեր ըլլայ, ի՞նչ է ան ... կը հարցնէ Տէր պապան ...

— Սուս եղիր, ծում էր տէ խունկին հօտէն կլոխը տառցաւ ...

— Հա՛ ... էյ սանկ վար ինջեցո՛ւր քի հաւա առնէ ...

— Ինծի նայէ Տէր պապա, ես քէնէ պան չեմ պահեր, աղջիկտես պիտի հանեմ տէ, կտորճիկ մը կը շտկուտեմ կոր ... էյէր հասկնալ կուզես նէ ...

— Էյ ասանկ օրի ... նասը՛ւ կըլլայ. թող տունը ընէիք ատ բանը ...

— Տղան ասանկ ուզեց, ես ալ չէ չըսի ...

— Աստուած դամամին հաոցունէ օրհնած ... ի՞նչ ըսեմ:

Նոյն ատեն մէկ քանի կրակուրոց տըղաքներ սանգուխներէն վեր կը վազեն ...

— Մօ՛ Միրի՛կ ... հայտէ նայինք քանի ատըմէն վեր պիտի ելլաս ... Նա նայէ ես կելամ կոր ...

Սուրբուհի տուտու ի տես տյդ անառակներուն,

— Մօ՛ հօրը մօրը զաւակները, վար կորսուեցէք ... հա՛ նայիմ ... հիմա հա՛ ...

— Քեզի ի՞նչ ... ժամը քուկդ է ...

— Գործ ունինք ծօ՛, վար կորսուեցէք կըսեմ կոր ...

— Ծօ՛ Լեւո՛ն . . . աղջկանը սուռաթը բռնուռա կը քսեն կոր . . . Ծօ՛ . . .

— Սուս Ծօ՛ . . . հիմա ծեծ կուտես հա՛ . . . վար նայիմ . . .

— Ծօ՛ . . . նայէ սուտ պաներ կը կոխէ կոր սիրտին վրայ . . . Ծօ՛ . . . Լէ՛ Լէ՛ Լէ՛ . . . հօ՛յ, հօ՛յ. հօ՛, ըսելով կսկսին Սուրբուհի տուտուի մօտ պար բռնել . . .

— Կետինին տիպը ասնիք շանն ձգնածներ քի, ասանկ մարդուն տառ քէթէին արուններ բխել կուտաք կոր . . . , քալէ քա Հոռորիկ, եղաւ ալթըխ, մայրիկը կանչէ տէ վար իջնանք երեսի ճուրղ . . .

Քիչ վերջը մայր եւ աղջիկ, առաջնորդուելով Սրբուհի տուտուի կողմէ վարը բանկալին մօտ կը կենան, մինչ յաւարտ եկեղեցւոյ ժողովարդը դուրս կելար տաճարէն . . .

— Հոռոր, աղջիկս, կրցածիդ խտար կէօքող դուրս տուր, կուստօլու կառպօլու կեցիր . . .

— Աման դուն ալ Սուրբուհի տուտու, տահա պան կայ նէ ըսէ . . .

— Անոր անտեղը ես գիտեմ, աս զէնահաթը հազ վէրկիսի է, ամէնուն խաշըխ նետելիք ապուրը չէ . . . , սուս, նա՛ կուգայ կոր . . .

Հեռուէն, բէրտահիտաթ թռաշով, որուն վրայի բռնուռաները լափ լափ դեռ կը կենային, ի նշան թարմութեան, իրենց կողմը կը յառաջանայ, երիտասարդէն չապիկ մը վեր, աղ պղպեղ պեխերով, երկայն բալթօ մը հագած, օձիկը վեր, վիզն ալ մետաքս թաշկինակ մը :

Նորընտրեալդոյն փեսացուն քանկալը մօտենալով խօսք կառնէ,

— Բայի դուն, ինդի թայոյթ մը տայվէթ . . .

— Ինչո՞ւ չէ, հրամանեցէք ըսելով մանրուքը կուտան պաշածնեայները . . .

— Մէյսի, մէտիտիէի մընայ տահա տուէթ . . .

Նոյն ատեն կսկսի օրիորդը դիտել աչքին պոչովը, չէ՛, ամբողջութեամբը . . .

Ասդին օրիորդը, ոլոր ոլոր կը բերէ մօրը միսերը, եւ մայրը իր կարգին, Սրբուհի տուտուի թեւը կոլորէ . . .

— Քա Սուրբուհի տուտու, խօսք կառնէ տիկին մայրը, ախանջէն . . . վրաս մարիքը կուգայ կոր . . .

— Սուս ետքէն կը խօրաթուինք . . .

Փեսացուն մանտրութները առած, կամաց կամաց ճատտէն կը բռնէ, մինչ ասդին, օրիորդ Հոռորիկ կսկսի տղա մը պէս լալ . . .

— Քա կընիկ, քու խելքիդ եկաւ, ատ բէթէկ հէրիֆը ի՞նչ տէյի դէմս հանեցիր . . .

— Քա ճանրմ վարժապետ ըլլալու չէ եա՛, հէրիք է քի, տունը տեղը կնիկը աղէկ նայի . . .

— Էյ տնաչէն, աղջկանըս կէօքսերը տօլդուն կուղէ կոր ըսելուդ, պէրանդ քիրա՞ կուգէր, էկէր ըսէիր քի, տղան թէթէ բէթէ է տէյի . . .

— Ինծի խապահաթ կը կտնաք կոր, դուք անտա՛ր վրաս ինկաք, անտա՛ր աղջիկըս կարգէ ըսիք քի, ես ալ աչիս կոցեցի քէօր քէօրնա միւլտէրի կտայ . . . ըսելով կը մեկնին հողկէ, բոլորովին տխուր ու յուսախափ :

×

Ծնունդի խթման երեկոյին պէս նուիրական օրի մը, նոյն իսկ Աստուծոյ տաճարին մէջ անցած նմանօրինակ խօսակցութիւնները եւ պատկերները տեսնելով եւ ըսելով, դեռ կը համարձակիք առաջարկել ինձ քաշուիլ հրապարակէն, ո՞վ դուք, որ հայու կընիկ ըլլալու պատիւը ունիք այսօր . . . :

Որչափ ատեն որ դուք չուղղուիք, չի կրթուիք ու չի կրնաք զանազանել պաշտանք անպաշտանէն, հոս կամ այլուր, զձեզ պախարակել եւ ձեր ամօթը երեսնուդ զարնելէ չպիտի դադրի իրը՝

Կրթիչ կանացի քարհեռուն

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ



Վ Ե Ճ Մ Ը

Մամաս աղա 8 տարեկան մանչ գաւակ մ'ունի որ 4 տարեկան հասակին մէջ թաղին մանկանց պարտէզը տրուած է աշակերկերութեան:

Շատ սիրուն եւ շատ ալ ուշիմ տղեկ մ'է եւ մէկ հատիկ ալ ըլլալուն ծնողքը վրան կը գուրգուրայ, մանաւանդ մայրը՝ Տիկին Կատարինէ:

Մայրն ամէն իրիկուն տղան առջին կը կանչէր եւ անոր ըսել կուտար սովորած ոտանաւորները, երգերն ու առակները, մարգանքներ ընել կուտար եւ իր սովորեցուցած Ֆրանսերէն քանի մը կցկտուր խօսքերը կրկնել տալով կը զուարճանար:

Մամաս աղա հին գլուխներէն ըլլալուն մասամբ միայն կարեւորութիւն կուտար տղուն սովորեցուցուած բաներուն. «Թող քիչ մ'ալ կարդալ սովորեցնեն, կ'ըսէր, Սբ. Սարգսին 8ը պիտի լմնցունէ 9ը պիտի մտնէ դեռ այբը, լէնը չի ճանչնար, սովորած շատ մը խաղերուն, երգերուն եւ մարգանքներուն հետ հարցուր անգամ մը թէ «հայր մեր» երեսը խաչակնքել մը գիտէ»:

— Զանքմ Մամաս աղա, դուն ալ կը նայիմ որ փափաքող ես սովորեցնել տղուդ Մաթուսաղային ժամանակէն մնացած չաւրիթ, պալաղի, փտած, ծթած եւ աշխարհքէն վերցած բաներ. (տղան իրեն կանչելով որ անկիւն մը թղթէ խաղալիկ կը չինէր) եկո՛ւր, մանչս, պօնժուռ մը ըսէ նայիմ, ես վրում, պօնսուռս մ'ալ ըսէ, երբոր մէկը քեզի ֆուսն քաշէ վու ըսէ նէ՝ դուն անոր ի՞նչ պիտի պատասխանես զիտե՞ս, մանչս. սա վա պիտի. ժը վի գաշեֆօլ ի՞նչ ըսել է աղւորիկս...:

Հայրը.— Աստուած քեզի խեղճ տայ, կնիկ... տղուն առաջ քու լեզուդ, մաքուր հայերէն խօսիլ սովորեցուր, օտար լեզուներն ալ ժամանակին կը սովորի դպրոցին մէջ. Հէմ ինծի նայէ, ի՞նչ կը նշանակէ ինը տասը տարեկան տղայ մը մանկապարտէզը մնայ, ալ կ'օգտէ իրեն եւ կ'աւելնայ պիտի սովորած քատրիլը, բօլքան, լանսիէն եւ չեմ գիտեր ինչերը. սըտեղ դպրոցները բացուելուն 8-10

օր կայ, պիտի երթամ տնօրէնին խօսիմ որ նախակրթարանը դնէ, որպէս զի հոն քիչ մ'ալ կարդալ գրել եւ հաշուել սովորի, տէ՛ր ողորմեա...:

— Զըլալիք բան է աղ, տարեշրջանը լրանալուն պէս Ֆրանքսըզներուն դպրոցը պիտի դնեմ որ մանչս հոն աղւոր գաղղիերէն սովորի. անցած իրիկուն չի տեսա՛ր հաճի Փիլիպ աղային տղան, սենեկէն ներս մտանք թէ ոչ, եկաւ ձեռուընիս սեղմեց եւ ժը վու սուհեք լը պօնժուռ ըսաւ: Զէ՛... ըլլալիք բան չէ, մեր դպրոցներուն մէջ կարելի չէ մեր տղաք Ֆրանսերէն սովորին. իշտէ եէմէնիճի Սերգիս աղային տղան՝ Ակիւզա՛սը, Ֆրէրներուն դպրոցէն ելած է, Ֆրանսերէնը իր մայրենի լեզուէն շատ աւելի դիւրութեամբ կը խօսի ու կը գրէ:

— Քա՛ դղում գլուխ, Սերգիոս աղային տղան թաղային շնորհքով վարժարանէ մը չըջանաւարտ ելելէն ետք գնաց այդ սեւազգեստ մարդոց դպրոցը եւ օգտուեցաւ. անանկ դպրոցին չըջանը չաւարտող, քու տղուդ պէս դեռ այբուբենը չի ճանչցող եւ հասարակ ընթերցանութիւն մը չգիտցող տղաք կարելի բան չէ որ Սերգիոս աղային տղուն եւ նմաններուն քառորդին չափ օգտուին, նոյն իսկ եթէ 8-10 տարիներ օտար վարժարաններ յաճախեն:— Կը սովորին, այո՛, հարցուր մի անգամ թէ ի՞նչ.— տարիներէ ետք, բարաղանի պէս քանի մը կցկտուր խօսքեր եւ կը կը մը կը աւել կարդալ մը, ջրին տու՛ր երթայ, աւաղի վրայ հիմնուած բաներ. գործ չունիս նէ՛ պարապ տեղը փարա օգտեցուր, 2 դըշնոց գիրքը 12 դրուշ, 10նոց գրի տետրակը 40 փարա, որ մէկն ըսեմ, հապա ո՛ւր դնել կը վայլէ եւ ինչ կը նշանակէ չեմ գիտեր Ֆօֆրէ ըսածնին, որուն համար ամէն երկու ամիսն անգամ մը 5-10 դշ. կ'առնեն:

— Բօրուէն ի՞նչ է:

— Բօրուէ չէ, Ֆօֆրէ, դպրոցը տղաց խմած ջուրերնուն եւ գործածած կաւիճներուն եւ մեխներուն փարան: Քա ինծի չե՛ս հաւատար նէ՛ հարցուր ուրիշի մը. չերթանք հեռուները, իշտէ աչքիդ առջեւն է Պետիկը, աղբօրդ տղան, մախսըմը դեռ տասը տարեկան չկար Ֆրանքսըզներուն դպրոցը դրին:

ուր 10 տարի գնաց եկաւ, ետքը եկաւ եւ երկու տող գաղղիներէն ձեռագիր մը չկրնալ խմբագրելուն եւ կանոնաւոր պարզ տոկոսի հաշիւ մը ընել չգիտնալուն, բրաթիկ մը սովորած չըլլալուն տեղ մը չընդունուեցաւ, աղբարդ ալ՝ ճարահատ՝ բռնեց օձիքէն խուլումձիի քով դրաւ:

— Ատ քարոզիչ ո՛չ մտիկ ընող կայ եւ ոչ ալ համոզւող եւ գացեր դպրոցին տի-
րէքթօրին հետ խօսեր գործը լմնցուցեր եմ, ալաֆրանկա սեպտ. 1 ըսեն նէ մանչս հոն է, ամբողջէքն ալ 40 է:

— Ամիսը քանի՞ դրուշ...

— Երկու մէճիտ:

— Մամասիկ աղա, մեծ բան մը չէ ամ-
սընէքը եւ հաւատա որ խումպարան բարո
նետածի պէս պիտի ըլլաս ամիսը 40-50 դրւ-
տաւովդ մէկ հատիկ զաւկիդ կրթութեան
համար:

— Թող մեր Հայ վարժարաններէն մէ-
կուն չըջանն յաջողութեամբ աւարտէ, կ'երդ-
նում որ ան ատեն ես իմ ձեռօքս կը տանիմ
տղան եւրոպական առաջնակարգ վարժարան
մը, եւ չէ թէ ան ատեն ամիսը 40, հապա
կրկինն ալ ուզեն նէ՝ ոիրայօժար կը վճա-
րեմ. հիմա չօճուխը այդ տարիքին մէջ,
դեռ իր մայրենի լեզուին առաջին դասը՝
այբը չի ճանչնար, վաստկելէ աւելի պիտի
տուժէ ատ մարդոց դպրոցին մէջ եւ բան
մ'ալ չպիտի սովորի, խապարն ինձմէ առ:

— Պարապ տեղը կզակդ մի՛ յոգնեցներ
ինծի համոզելու համար, ինչ որ ալ ընես,
ինչ որ ալ ըսես անպատճառ տղան մանկա-
պարտէզէն պիտի հանեմ աս տարի Փրերեն-
բուն դպրոցը դնեմ, վիսսեխաւ:

— Ես ալ քեզի բան մը ըսեմ:

— Ըսէ:

— Տղան դպրոցէն չպիտի ելնէ:

— Պարապ խօսք, եթէ նոյն իսկ իրարմէ
բաժնուելին ալ գիտնամ, տղան Ծրանք-
սըզներուն դպրոցը պիտի դնեմ անպատ-
ճառ:

Մէփիստոփէլ լուր կը բերէ մեզի թէ,
«պիտի երթայ, չպիտի երթայ» պայքա-
րին մէջ յաղթանակը կինը տարեր է:

Միջոցը կանցնի 8-10 տարիներ, Մէ-
փիստոփէլ առտու մը կանուխ հեւ ի հեւ

դարձեալ մեզի լուր կը բերէ թէ՝ տիկին
Կատարի (Մամաս աղայի կինը) տղան ութ
տաս տարիներ Եւրոպական վարժարանն
յաճախելէ ետք, 19-20 տարեկան մեկներ
է անտի, առանց պարզ սեռթիֆիքա մը իսկ
առնել կարողանալու, այնքան տարիներու
մէջ սովորեր է՝ «Ժըվը սալիւ, Մառի, բլէն
տը կըռսա, Դոթուր բէռ քի էթ ղօսիէօ»,
Փրանսերէն քանի մը կցկտուր թոթովանք-
ներ, եւ կըմըմալով սխալ միալ կարդալ
մը առանց հասկնալու:

Գ. Փ.



ՊԱՐՈՆԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Երբ կը տեսնեմ կին մը, որ ձիուն
սանձը բռնած կառք մը կը վարէ՝
խեղճ էրիկներն կը յիշեմ:

×


Սիրոյ միջնորդ կիներն առանց փու-
շի վարդ չըլլար առաժն կրկնելով շատ
անգամ առանց վարդի փուշ կը կլկեց-
նեն նշանուիլ ուզող երիտաւարդնե-
րուն:

×

Տեսակ մը կիներու համար բժա-
խըդիր կը նկատուի այն էրիկն, որ
իւր կնոյ աններելի մէկ յանցանքին
համար կնաթողութեան կը դիմէ:

×

Կին մը զգուշանալու է ոչ միայն
կասկած տուող վարմունք ունենալէ
այլ նոյն իսկ այնպիսի ընթացքի մը
մէջ գտնուելէ որ՝ թէեւ անմեղձ սակայն
կրնայ ամուսնոյն մտքին մէջ կասկած-
ներ յարուցանելու պատճառ ըլլալ:



ԼՈՒՐԱԳԻՏԱԿ

Դեղեցկին, քառոյն, շաին ի խնդիր,
 Խմբագրապետը քերթիս նորնէսիր,
 Այսինքն Տիար Պապօնեան Մարտիկ,
 Երբ հրատարակով մ'անուշ, խառնոսիկ,
 Քան զայլ խրմբագիրս, անկողնակալ յոյժ,
 Պատուելով զըրիցս անկար ու վասոյժ,
 Կը խնդրէ որ իր քերթին մէկ էջին
 Աշխատակցութիւնն ստանձնեմ չընչին
 Եւ քաւմ լուրերով ու բազմագունակ
 Զարդարել, պըննել զամ զայն շարունակ,
 Զեմ ուզեր մերժել զինքն այս անգամ
 Իբրեւ իր անձին անկեղծ քարեկամ,
 Ու ընթերցողացն իր այսօր կամիմ
 Ըղծաւնս անգուսպ, յօծարակամ իմ
 Հաղորդել լրոյիկ, մընչիկ, յետագայ
 Ինչ լուր որ զըրիս ներքեւ պիտի գայ:

Թաղական հորհուրդն անգին Բերայի
 Որ իր պաշտօնին խնձիւ կը նայի
 Եւ իրեն ջանքերն անբողջ կը ձգտի
 Թաղին մէջ կանգուն դըպրոցաց օգտին,
 Տեսնելով որ իր ուսուցիչք ամեն
 Օղիին, գիւնոյն ծուծը կը քամեն,
 Ու կը ծառայեն յաւեհ Բագոսին
 Անխրքեր, անհոգ, գործերնուն մասին,
 Անցեալ շաբաթ մէջ, քարկացաւ սաստիկ,
 Եւ որոշումով մ'յոյժ քարեքաստիկ,
 Պատուիրեց անոնց չը խնել զինք
 Ու կեանք մ'անցընել շաւ, առաքինի:
 Մոյրեալներուն դարձուցիչն, Որ էն,
 Մաղթեմք որ կարգի բերէ ոչ, նորէն,
 Ուսուցիչներու երաւն այս քաղին,
 Որպէս զի գործի մէջ չը դանդաղին,
 Եւ քարի Աստուծոն ալ Պարգեւատն,
 Զանոնք ուղարկէ շիտա՛կ դէպ ի տուն:

Լուր եկաւ մեզի ցաւով մը խորին,
 Թէ Տէր Այսընեան Հայրն՝ Ազգեհորին,
 Որ իր բեղնաւոր հասակին մէջ ծեր
 Ժրաջան հովուի համբաւ մ'հանած էր,
 Ծընընդեան յաջորդ օրուան մէջ, աւա՛ղ,
 Նըկատելով որ անագան կամ վաղ
 Պիտի հրաժարի կեանքէն, անխափան,
 Դերեզմանատան քոնած է ճամբան
 Եւ աւանդած է ի ձեռն Արարչին,
 Խիստ արքանդուր շունչը իր վերջին:

ՆՈՒՐԱԳԻՏԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

- = Ինչպէս որ գիտեմք տներուն առթիւ
 Նուերներ եղան անհամար անթիւ:
- = Կեսուրը հարսին տուաւ մէկ ընծայ
 Որուն կուտն արդէն աները ձեռնայ:
- = Շատ մը աղջիկներ իրենց սիրողին
 Սանկ խօսքը բացին մասնիկն օղին:
- = Բայց վերջը միայն շիշ մը լավանդաւ
 Առին ու լսին այս ալ ավանդաւ:
- = Ով որ չը տարաւ գէթ մէկ օյինճախ
 Անպատճառ կերաւ մի սուրբուշտու ջախ:
- = Շատեր ալ ըրին սուտաբ ու ժանիք
 Զի նուերն կոտրեց իրենց արժանիք:
- = Շատ մը նըշաններ նուերի համար
 Ետ պիտի ըլլան զի չեին յարմար:
- = Քարոզիչներ ալ անձանց ընտրելոց
 Մէկ մէկ օրացոյց տուին բոլորեց:
- = Որք երբ Ծընունդին այց ըրին խուր
 Անշուշտ չի մոռցան տալու ծամուր:
- = Երբ իբր մօտայ միշտ քերթերու մէջ
 Դրուած նուերներն քոնեն խոշոր էջ:
- = Ես ալ իմ նուերս պիտի զըրեմ այս տեղ
 Զը կարծեմք երբեք չամիչ կամ քաստեղ:
- = Այլ լաւ տեսակէն առի հետիւյի
 Քեռի-Թոշի նուեր տուի մը ԷՆԾԻԹԷ:

ՍԿԷԼԱՐ

ԵՐԾՈՒ



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄ — Հրաշագործ Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոսի նուիրած ձեռագիր մագաղաթեայ Աւետարանը — որու համար Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իրեն հետ Սիս տարած է Կըսուէր, և որ այս վերջնոյն կողմէ մերժուած էր — այս անգամ Տէր Եսայի թիւն Ս. Պատրիարքին արտօնութեամբ քննուեցաւ Նիւ-Եորքի համալսարանին հնագիտական բաժնի Բրոքսէսէօրին և պարոն Ֆրէտէրիկ Մուրատեանի կողմէ :

Ծ. Խ. — Ճշմարտութիւնը ուշ կամ կանուխ երեւան կ'ենէ : Անոնք որ ժամանակին Ս. Կաթողիկոսին յայտարարութեան անկեղծութեանը հաւատ չընծայեցին, և գայթակղական աղմուկ հանեցին, զրպարտիչի տիտղոսը կը կրեն այժմ իրենց ճակարին վրայ :

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ — Ուսումնական Խորհուրդը անցեալ դպրոցական չըջանին 131 ընթացաւարտներու վկայականներ բաշխեց : Պատրիարքարանի սրահին մէջ, անցեալ կիրակի օր, ճառախօսութիւններ տեղի ունեցան այս առթիւ : Հաստատուած է թէ չըջանաւարտներուն մեծագոյն մասը կարգաւ գրեւ սորված են :

Ծ. Խ. — Կարգաւ գրելը չի բաւեր չըջանաւարտ եղողի մը, այլ ՈՒՂԻՂ կարգաւ և ՈՒՂԻՂ գրել պէտք է սորված ըլլան :

ՎԵՆԵՏԻԿ — Հոս բնակող այրի տիկին Եղորդեանի կողմէ Բանկալթիի Ս. Յակոբայ անկեղանոցին եղած կտակին գումարը ոչ թէ 50,000 ոսկի է,

ինչպէս ծանուցուեցաւ, այլ միայն 2,500 ոսկի :

Ծ. Խ. — Իտալական լիրա ըսուածը ֆրանսական ֆրանքին հաւասար է : Հետեւապէս 50,000 Իտալական լիրա կ'ընէ 2,500 ֆրանսական ոսկի :

ՍԿԻՏԱՐ (գերեզմանատուն) — Պահպանին հրաժարականը ընդունուեցաւ : Ասպարէզը մնաց փանոսեան էֆէնտին : Մեռելներու տեղափոխութիւնը կը շարունակուի, որպէս զի գերեզմանատունը գեղեցիկ պարտէզի մը վերածուի, և . . . որպէս զի դժբաղդահները հաճոյալի տեսարան մը վայելեն :

Ծ. Խ. — Մեռելները չեն որ կը տեղափոխուին : Թաղերը միայն քիչ բացառութեամբ պզտիկ փոփոխութիւններ կը կրեն : Ամէն պարագայի մէջ Փանոսեան էֆէնտի յամառ աշխատող մըն է, և կարժէ որ պէտք եղած դիւրութիւններն ընծայուին :

ՇԻՇԼԻ (գերեզմանատուն) — Մեռելոցի օրը սգաւորներու բաղմութիւնով լեցուած էր գերեզմանատունը : Քահանաները իւզոտ պատառներուն հազիւ կը հասնէին : Աղքատ մեռելներուն տէրերը անմխիթար վերագարձան :

Ծ. Խ. — Որ մէկին հասնին խեղճ քահանաները, տուն օրհնէքի թէ մեռել օրհնէքի :

Արսոնաշէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈԳՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ լըւտ անդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆատներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և ջինու համաբաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐԲ, Պահճէ-գաբու, օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաեւ ամէն նշանաւոր դեղարաններու և գեղորէից մթերանոցներու քով:

50—25

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐՁԵՆԵԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը չհաճ է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ բնտիր հագուստներու, կանանց քեյշիկներու և տղայոց չիք և դիմացկուն ֆաթիւններու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 ղրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

50—20

Խ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԻ ԴԱՍԱՏՈՒ

Ներկայ ձմեռուան առթիւ ընտանեկան երեկոյթներու անհրաժեշտ պարը քիչ ժամանակուան մէջ ուսանելու փափաքողը կրնան դիմել իրեն Բերա, Կալթաթէրայի դէմ Սիթէ տը Բերայի մէջ թիւ 11. Պոլսոյ կողմ Մեծ Շուկայ, Գալթաթէրայի դուռը, Ֆէսճի Սեպուհ աղայի խանութը:



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն զժուարհաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50 - 16

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։